

Հավելված N 36
ՀՀ կառավարության 2021 թվականի
մարտի 25-ի N 419-Ն որոշման

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

2017 թվականի հունիսի 30-ի թիվ 80

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Փոփոխող փաստաթղթերի ցանկ

2017 թվականի մարտի 17-ի թիվ 11

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի
2019 թվականի հունիսի 18-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 57-րդ հոդվածի 2-րդ կետին, «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 9 հավելված) 5-րդ կետի ութերորդ եւ իններորդ պարբերություններին, «Սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների կիրառման մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 12 հավելված) 4-րդ կետի չորրորդ պարբերությանը եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ

հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 6-րդ, 9-րդ եւ 21-րդ կետերին համապատասխան, ինչպես նաեւ արտադրանքի պետական գրանցման վկայականների միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց տրամադրելու նպատակով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան որոշեց.

1. Հաստատել կցվող՝

արտադրանքի պետական գրանցման վկայականի միասնական ձեւը,

արտադրանքի պետական գրանցման վկայականի ձեւակերպման կանոնները,

արտադրանքի պետական գրանցման վկայականների միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման կարգը:

2. Սահմանել, որ՝

ա) արտադրանքի պետական գրանցման վկայականի ձեւաթուղթը խիստ հաշվետվության փաստաթուղթ է, պատրաստվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ) տպագրական եղանակով՝ ձեւաթղթերի պաշտպանության աստիճանին ներկայացվող եւ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող պահանջներին համապատասխան, եւ ունի պաշտպանության առնվազն 4 աստիճան, այդ թվում՝ տպագրական համար.

բ) արտադրանքի պետական գրանցման վկայականները, որոնք ձեւակերպվել են արտադրանքի՝ Միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին կամ պետական գրանցման ենթակա արտադրանքի (ապրանքների)՝ միասնական սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով, նախքան սույն որոշումն ուժի մեջ մտնելը, վավեր են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը.

գ) սույն որոշմամբ հաստատված ձեւով տրված՝ արտադրանքի պետական

գրանցման վկայականները ներառվում են արտադրանքի պետական գրանցման վկայականների միասնական ռեեստրում, որի ձեւավորումն ու վարումն իրականացվում են սույն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան:

3. Ուժը կորցրած ճանաչել՝

Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի մայիսի 28-ի «Եվրասիական տնտեսական միությունում սանիտարական միջոցառումների կիրառման մասին» թիվ 299 որոշման 1-ին կետը՝ Արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի միասնական ձեւի (Պետական գրանցման վկայականի միասնական ձեւի) հաստատման մասով, բացառությամբ մինչ սույն որոշումն ուժի մեջ մտնելը տրված՝ պետական գրանցման վկայականների մասին տեղեկությունների արդիականացման դեպքերի.

Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի «Մաքսային միությունում սանիտարական միջոցառումների կիրառման հարցերի մասին» թիվ 341 որոշման 1.1 ենթակետը՝ Արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի միասնական ձեւի փոփոխությունների հաստատման մասով.

Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի սեպտեմբերի 20-ի «Մաքսային միության հանձնաժողովի՝ տեխնիկական կանոնակարգման եւ սանիտարական միջոցառումների վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 383 որոշման 1-ին կետը՝ սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության մասով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշմամբ հաստատված՝ փաստաթղթերի Միասնական ձեւերում փոփոխությունները հաստատելու մասով.

Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի «Մաքսային միությունում սանիտարական միջոցառումների կիրառման հարցերի

մասին» թիվ 432 որոշման երրորդ պարբերությունը՝ սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության մասով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշմամբ հաստատված՝ փաստաթղթերի Միասնական ձեւերում փոփոխությունները հաստատելու մասով.

Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի մարտի 2-ի «Արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերի միասնական ձեւերում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 568 որոշումը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի հունիսի 13-ի «Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան՝ պետական գրանցման ձեւով համապատասխանության գնահատման ենթակա արտադրանքի պետական գրանցման վկայականի ձեւի մասին» թիվ 82 որոշումը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի նոյեմբերի 6-ի «Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 206 որոշումը.

Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշման մեջ կատարվող փոփոխությունների 4-րդ կետը (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2015 թվականի նոյեմբերի 10-ի «Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 149 որոշման հավելված):

4. Անդամ պետությունների լիազորված մարմիններին եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ ապահովել պետական գրանցման վկայականների այն ռեեստրում ներառված տեղեկությունների պահպանումը, արդիականացումը, որի մասին Հիմնադրույթը նախատեսված է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշմամբ հաստատված՝ Պետական

գրանցման վկայականի միասնական ձեռի թիվ 2 հավելվածով, ինչպես նաև այդ տեղեկությունների՝ անձանց անսահմանափակ շրջանակի համար հասանելիությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունիսի 1-ից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝

S. ՍԱՐԳՍՅԱՆ

Հաստատված է
Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի հունիսի 30-ի
թիվ 80 որոշմամբ

Փոփոխող փաստաթղթերի ցանկ
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի
2019 թվականի հունիսի 18-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ
ՎԿԱՅԱԿԱՆԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՁԵՎ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (1)

(Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազորված մարմինը)

ՎԿԱՅԱԿԱՆ
(2) արտադրանքի պետական գրանցման

«_____» _____ 20__ թ. թիվ _____ (3)

ԱՐՏԱԴՐԱՆՔ _____ (4)

ԱՐՏԱԴՐՈՂ _____ (5)

ՀԱՅՏԱՏՈՒ _____ (6)

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է _____ (7)

ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ Է _____-Ի ՀԻՄԱՆ ՎՐԱ (8)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ _____ (9)

_____ Կ.Տ. _____
(10)

(Եվրասիական տնտեսական միության անդամ պետության

(ստորագրություն)

(Ա.Ա.Հ.)

լիազորված մարմնի ղեկավարի (լիազորված անձի) պաշտոնը)

ԹԻՎ _____ (11)

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

_____ (Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազորված մարմինը)

ՀԱՎԵԼՎԱԾ

արտադրանքի պետական գրանցման վկայականի

«_____» _____ 20__ թ. թիվ _____

Հաստատված են

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի հունիսի 30-ի
թիվ 80 որոշմամբ

ԿԱՆՈՆՆԵՐ

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ

Փոփոխող փաստաթղթերի ցանկ

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի
2019 թվականի հունիսի 18-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)

1. Սույն կանոններով սահմանվում է արտադրանքի այն պետական գրանցման վկայականի ձեւակերպման կարգը (այսուհետ համապատասխանաբար՝ պետական գրանցում, վկայական), որով հաստատվում է արտադրանքի համապատասխանությունը Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, տեխնիկական կանոնակարգ (տեխնիկական կանոնակարգեր)) կամ սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա արտադրանքին ներկայացվող՝ Միասնական սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին (այսուհետ՝ Միասնական սանիտարական պահանջներ), որոնք հաստատված են Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշմամբ, այն արտադրանքի (ապրանքների) համար, որը ներառված է նշված որոշմամբ հաստատված՝ Եվրասիական

տնտեսական միության մաքսային սահմանին եւ մաքսային տարածքում պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա արտադրանքի (ապրանքների) Միասնական ցանկի II բաժնում.

2. Վկայականը ձեւակերպվում է Միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված մարմնի (մարմինների) (կազմակերպության, հաստատության) կողմից (այսուհետ համապատասխանաբար՝ անդամ պետություն, լիազորված մարմին)՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2017 թվականի հունիսի 30-ի թիվ 80 որոշմամբ հաստատված միասնական ձեւով:

Վկայականը կարող է ձեւակերպվել էլեկտրոնային փաստաթղթի տեսքով:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի հունիսի 18-ի թիվ 102 որոշմամբ)

3. Պետական գրանցում իրականացնելու դեպքում հայտատու կարող են լինել անդամ պետության տարածքում՝ դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձը, որն արտադրող կամ վաճառող (ներմուծող) է կամ արտադրողի կողմից լիազորված անձ է:

4. Տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում հայտատուն լիազորված մարմին է ներկայացնում հայտը, ինչպես նաեւ տեխնիկական կանոնակարգով (տեխնիկական կանոնակարգերով) նախատեսված փաստաթղթերը եւ տեղեկությունները:

5. Միասնական սանիտարական պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում հայտատուն լիազորված մարմին է ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը եւ տեղեկությունները.

ա) դիմումը՝ Միության մաքսային տարածքում արտադրված արտադրանքի համար (կարող է տրամադրվել էլեկտրոնային փաստաթղթի ձևով)։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի հունիսի 18-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)

այն փաստաթղթերի պատճենները, որոնց համապատասխան արտադրվել է արտադրանքը (տեխնիկական պայմաններ, տեխնոլոգիական հրահանգներ, մասնագրեր, բաղադրագրեր եւ (կամ) տեղեկություններ բաղադրության մասին եւ այդ արտադրանքն արտադրողի կողմից վավերացված այլ փաստաթղթեր)։

արտադրանքն արտադրողի կողմից վավերացված՝ որակի սերտիֆիկատի կամ անվտանգության (որակի) անձնագրի, կամ որակի հավաստագրի պատճենը, կամ արտադրանքն արտադրողի գրությունը, որով հաստատվում է արտադրված արտադրանքի (արտադրանքի փորձանմուշների (նմուշների)) համապատասխանությունը սույն ենթակետի երրորդ պարբերության մեջ նշված փաստաթղթերի պահանջներին։

արտադրանքն արտադրողի փաստաթուղթն արտադրանքի կիրառման (շահագործման, օգտագործման) մասին (հրահանգներ կամ ուղեցույց, կամ կանոնակարգ, կամ ցուցումներ) կամ դրա պատճենը՝ հայտատուի կողմից վավերացված։

արտադրանքի պիտակների (փաթեթվածքների) պատճենները կամ դրանց մանրակերտերը՝ հայտատուի կողմից վավերացված։

փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու ակտը։

Միասնական սանիտարական պահանջներին համապատասխանության մասով արտադրանքի լաբորատոր հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների արձանագրությունները, գիտական զեկույցները, փորձագիտական եզրակացությունները (եզրակացությունները)։

անդամ պետության օրենսդրությանը համապատասխան իրավաբանական անձի կամ որպես անհատ ձեռնարկատեր՝ ֆիզիկական անձի պետական գրանցման ժամանակ տրվող՝ հայտատուի գրանցման կամ հաշվառման (անհատական, նույնականացման) համարի մասին տեղեկություններ.

բ) Միության մաքսային տարածքից դուրս արտադրված արտադրանքի համար՝

հայտը.

այն փաստաթղթերի պատճենները, որոնց համապատասխան արտադրվել է արտադրանքը (տեխնիկական պայմաններ, տեխնոլոգիական հրահանգներ, բնութագրեր, բաղադրագրեր, տեղեկություններ բաղադրության մասին եւ այլ փաստաթղթեր)՝ այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան վավերացված, որտեղ իրականացվում է պետական գրանցումը.

արտադրանքն արտադրողի կողմից վավերացված՝ որակի սերտիֆիկատի կամ անվտանգության (որակի) անձնագրի, կամ որակի հավաստագրի, կամ ազատ վաճառքի սերտիֆիկատի պատճենը, կամ արտադրանքն արտադրողի նամակի պատճենը, որով հաստատվում է արտադրված արտադրանքի (արտադրանքի փորձանմուշների (նմուշների))՝ սույն ենթակետի երրորդ պարբերության մեջ նշված փաստաթղթերի պահանջներին համապատասխանությունը՝ վավերացված այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որտեղ անցկացվում է պետական գրանցումը.

արտադրանքն արտադրողի փաստաթուղթն արտադրանքի կիրառման (շահագործման, օգտագործման) մասին (հրահանգներ կամ ուղեցույց, կամ կանոնակարգ, կամ ցուցումներ) կամ դրա պատճենը՝ հայտատուի կողմից վավերացված.

արտադրանքի պիտակների (փաթեթվածքների) պատճենները կամ դրանց մանրակերտերը՝ հայտատուի կողմից վավերացված.

ախտահանիչ (միջատասպան, կրծողասպան) միջոցի արտադրման վայր հանդիսացող պետության առողջապահության լիազորված մարմնի (այլ մարմնի) կողմից տրված՝ արտադրանքի անվտանգությունը հաստատող եւ դրա շրջանառությունը տվյալ պետության տարածքում թույլատրող փաստաթղթի պատճենը՝ վավերացված այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որտեղ իրականացվում է պետական գրանցումը, կամ նման փաստաթուղթ ձեւակերպելու անհրաժեշտության բացակայությունը հաստատող՝ արտադրանքն արտադրողի փաստաթղթերը (ախտահանիչ միջոցների պետական գրանցման դեպքում)։

Միասնական սանիտարական պահանջներին համապատասխանության մասով արտադրանքի լաբորատոր հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների արձանագրությունները, գիտական զեկույցները, փորձագիտական եզրակացությունները (եզրակացությունները)։

Միության մաքսային տարածք արտադրանքի փորձանմուշների (նմուշների) ներմուծումը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ վավերացված այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որտեղ իրականացվում է պետական գրանցումը։

անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ իրավաբանական անձի կամ որպես անհատ ձեռնարկատեր՝ ֆիզիկական անձի պետական գրանցման ժամանակ տրվող՝ հայտատուի գրանցման կամ հաշվառման (անհատական, նույնականացման) համարի մասին տեղեկություններ։

6. Լիազորված մարմինը՝

ա) ընդունում եւ գրանցում է հայտը։

բ) անցկացնում է տեխնիկական կանոնակարգով (տեխնիկական կանոնակարգերով) սահմանված պահանջներին համապատասխան (տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի

ծեակերպման դեպքում) կամ սույն կանոնների 5-րդ կետին համապատասխան (Միասնական սանիտարական պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեռագրման դեպքում) հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի եւ տեղեկությունների փորձաքննություն.

գ) վկայականի մասին տեղեկություններ է ներառում արտադրանքի պետական գրանցման վկայականների միասնական ռեեստրի ազգային մասում.

դ) ձեռագրում եւ տրամադրում է վկայականը:

7. Վկայականի ձեռագրման նպատակով՝ արտադրանքի հետազոտությունները (փորձարկումները) եւ չափումներն անցկացվում են Միության համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրում ներառված՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) կողմից (այսուհետ՝ փորձարկման լաբորատորիաներ (կենտրոններ)):

(7-րդ կետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի հունիսի 18-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)

8. Տեխնիկական կանոնակարգի (կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեռագրման դեպքում հետազոտություններ (փորձարկումներ) եւ չափումներ անցկացնելու նպատակով արտադրանքի նույնականացումն ու փորձանմուշներ (նմուշներ) վերցնելն իրականացնում է արտադրողը կամ հայտատուն, կամ հայտատուի հանձնարարության (հայտի) հիման վրա եւ նրա ներկայությամբ՝ փորձարկման լաբորատորիան (կենտրոնը)՝ միջազգային եւ տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների ցանկում ներառված փաստաթղթերով սահմանված կանոններով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման ու կատարման եւ տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատում

իրականացնելու համար անհրաժեշտ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ նմուշառման կանոնները պարունակող ազգային (պետական) ստանդարտներով՝ արտադրողի պահեստում (Միության մաքսային տարածքում արտադրված արտադրանքի համար) կամ արտադրողի կամ հայտատուի պահեստում (Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս արտադրված արտադրանքի համար): Թույլատրվում է անդամ պետության հավատարմագրված տեսչական մարմնի կողմից արտադրանքի փորձանմուշների (նմուշների) վերցնումը:

Միասնական սանիտարական պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում Միության մաքսային տարածքում արտադրված արտադրանքի փորձանմուշների (նմուշների) վերցնումն իրականացվում է փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) կողմից՝ հետազոտություններ (փորձարկումներ) եւ չափումներ անցկացնելու նպատակով:

Միության մաքսային տարածքից դուրս արտադրված արտադրանքի՝ Միասնական սանիտարական պահանջներին համապատասխանության մասով հետազոտություններ (փորձարկումներ) եւ չափումներ անցկացնելու նպատակով դրա փորձանմուշները (նմուշները) տրամադրվում են արտադրանքն արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի) ուղեկցող գրության հետ միասին՝ կցելով փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) հետ կնքված պայմանագրի պատճենը կամ փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) գրությունը: Փոստային առաքանիներով ստացված՝ արտադրանքի փորձանմուշները (նմուշները) եւ ապրանքաուղեկից փաստաթղթերի պատճեններն ընդունվում են առանց «Ներմուծումը թույլատրված է» նշման:».

(8-րդ կետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի հունիսի 18-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)

9. Վկայականը տրամադրելու մասին որոշումը կայացնում է լիազորված մարմինը՝ հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի եւ տեղեկությունների փորձաքննության դրական արդյունքների, ինչպես նաեւ արտադրանքի լաբորատոր հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների արդյունքների հիման վրա՝ տեխնիկական կանոնակարգով (տեխնիկական կանոնակարգերով) սահմանված պահանջներին (տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում) կամ Միասնական սանիտարական պահանջներին (Միասնական սանիտարական պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում) դրա համապատասխանության մասով:

10. Չի թույլատրվում պահանջել տեխնիկական կանոնակարգով (տեխնիկական կանոնակարգերով) (տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում) կամ սույն կանոնների 5-րդ կետով (Միասնական սանիտարական պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում) չնախատեսված փաստաթղթեր:

11. Հայտատուն պատասխանատվություն է կրում վկայականի ձեւակերպման նպատակով լիազորված մարմին ներկայացված փաստաթղթերում եւ տվյալներում պարունակվող տեղեկությունների հավաստիության համար:

12. Սույն կանոնների 4-րդ եւ 5-րդ կետերում նշված՝ օտար լեզվով կազմված փաստաթղթերի թարգմանությունն այն անդամ պետության պետական լեզվով, որտեղ իրականացվում է պետական գրանցումը, պետք է վավերացված լինի այդ պետության օրենսդրությանը համապատասխան:

13. Վկայականի գրանցման նպատակով լիազորված մարմին ներկայացվող փաստաթղթերը եւ տեղեկությունները կարող են ուղարկվել էլեկտրոնային ձեւով՝ այն անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, որտեղ իրականացվում է պետական գրանցումը:

14. Վկայականի ձեւակերպումը կարող է մերժվել հետեւյալ հիմքերով՝

ա) տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում՝

տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի անհամապատասխանությունը.

սույն կանոնների 3-րդ կետով սահմանված պահանջներին հայտատուի չհամապատասխանելը,

տեխնիկական կանոնակարգով (տեխնիկական կանոնակարգերով) նախատեսված փաստաթղթերը եւ (կամ) տեղեկությունները ոչ ամբողջ ծավալով ներկայացնելը, ինչպես նաեւ ոչ հավաստի տեղեկատվություն պարունակող փաստաթղթեր եւ (կամ) տեղեկություններ ներկայացնելը.

տեխնիկական կանոնակարգում (տեխնիկական կանոնակարգերում) այնպիսի նորմի բացակայությունը, որով սահմանվում է, որ տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի որոշակի տեսակի համապատասխանությունը կարող է հաստատվել պետական գրանցման եղանակով.

արտադրանքի արտադրման, շրջանառության եւ օգտագործման (կիրառման) ժամանակ մարդու առողջության եւ նրա բնակության միջավայրի վրա արտադրանքի վնասակար ազդեցության դեպքերի մասին այնպիսի հիմնավորված տեղեկատվության ստացումը լիազորված մարմնի կողմից, որն ուղարկվում է անդամ պետության՝ միջազգային կոնվենցիաներին եւ պայմանագրերին միանալու շրջանակներում.

բ) Միասնական սանիտարական պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում՝

արտադրանքի անհամապատասխանությունը Միասնական սանիտարական պահանջներին.

սույն կանոնների 3-րդ կետով սահմանված պահանջներին հայտատուի չհամապատասխանելը,

հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի եւ (կամ) տեղեկությունների անհամապատասխանությունը սույն կանոնների 5-րդ կետում նշված փաստաթղթերին եւ (կամ) տեղեկություններին.

ներկայացված փաստաթղթերի եւ (կամ) տեղեկությունների անհամապատասխանությունն այն անդամ պետության օրենսդրության պահանջներին, որտեղ իրականացվում է պետական գրանցումը, ինչպես նաեւ ոչ հավաստի տեղեկատվություն պարունակող փաստաթղթեր եւ (կամ) տեղեկություններ ներկայացնելը.

վկայականի ձեւակերպման եւ տրամադրման համար այնպիսի հիմքերի բացակայությունը, որոնք նախատեսված են Միության օրենքով կամ այն անդամ պետության օրենսդրությամբ, որտեղ իրականացվում է պետական գրանցումը.

արտադրանքի եւ դրա արտադրման ու շրջանառության պայմանների նկատմամբ անվտանգության պահանջներ սահմանելու անհնարինությունը, ինչպես նաեւ արտադրանքում եւ մարդու բնակության միջավայրում այդ արտադրանքի վտանգավոր գործոնների որոշման ու չափման մեթոդիկաների բացակայությունը.

արտադրանքի արտադրման, շրջանառության եւ կիրառման (օգտագործման) ժամանակ մարդու առողջության եւ նրա բնակության միջավայրի վրա արտադրանքի վնասակար ազդեցության դեպքերի մասին հիմնավորված տեղեկատվության առկայությունը:

15. Լիազորված մարմինը վկայականի ձեւակերպումը մերժելու մասին որոշումը (գրավոր կամ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով) մերժման

պատճառների հիմնավորման հետ միասին՝ այն ընդունելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է հայտատուին, անդամ պետությունների լիազորված մարմիններ, ինչպես նաև՝ Հանձնաժողով:

Տեղեկատվական փոխգործակցությունն անդամ պետությունների լիազորված մարմինների միջև, ինչպես նաև Հանձնաժողովի հետ իրականացվում է Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ:

16. Լիազորված մարմինը վկայականը տրամադրում է հայտը եւ դրան կցված փաստաթղթերի լրակազմն ստանալու օրվանից հետո 30 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում (եթե այլ բան նախատեսված չէ տեխնիկական կանոնակարգով (տեխնիկական կանոնակարգերով)):

17. Վկայականը լրացվում է ռուսերենով՝ էլեկտրոնային տպիչ սարքերի օգտագործմամբ եւ անդամ պետության օրենսդրության մեջ համապատասխան պահանջի առկայության դեպքում՝ այն անդամ պետության պետական լեզվով, որտեղ իրականացվում է պետական գրանցումը:

Վկայականը ռուսերենով եւ անդամ պետություններից մեկի պետական լեզվով լրացնելու դեպքում լրացվում է վկայականի տարբեր կողմերի վրա:

18. Անհրաժեշտության դեպքում՝ արտադրողի անվանումը, նրա գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն), ինչպես նաև արտադրանքի արտադրմանն առնչվող գործունեության իրականացման վայրի հասցեն (հասցեները) (բացի պետության անվանումից) եւ արտադրանքի նշագիրը (տիպ, մակնիշ, մոդել, արտիկուլ եւ այլն) կարող են նշվել լատինական այբուբենի տառերի օգտագործմամբ:

19. Տեխնիկական կանոնակարգի (կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում այդ վկայականը գործում է դրա տրման օրվանից՝ 5 տարվա ընթացքում (եթե տեխնիկական կանոնակարգով (կանոնակարգերով) այլ բան նախատեսված չէ):

Տեխնիկական կանոնակարգի (կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի գործողությունը տարածվում է հետազոտություններ (փորձարկումներ) եւ չափումներ անցած՝ արտադրանքի վերցված փորձանմուշների (նմուշների) պատրաստման օրվանից հետո արտադրված արտադրանքի վրա:

Տեխնիկական կանոնակարգի (կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի գործողության ժամկետի ընթացքում Միության մաքսային շրջանառության մեջ դրված արտադրանքի առնչությամբ թույլատրվում է այդ արտադրանքն իրացնել մինչեւ արտադրողի կողմից նախատեսված՝ դրա պիտանիության (պահպանման) ժամկետների ավարտը (եթե տեխնիկական կանոնակարգով (կանոնակարգերով) այլ բան նախատեսված չէ):

Միասնական սանիտարական պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում այդ վկայականը գործում է դրա տրման օրվանից՝ արտադրանքի արտադրման կամ Միության մաքսային տարածք արտադրանքի ներմուծման ամբողջ ժամանակահատվածում եւ մինչեւ Միության մաքսային տարածքում շրջանառության մեջ գտնվող արտադրանքի լիարժեք իրացումը (հաշվի առնելով արտադրողի կողմից նախատեսված՝ դրա պիտանիության (պահպանման) ժամկետները):

(19-րդ կետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի հունիսի 18-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)

20. Վկայականի բոլոր դաշտերը պետք է լրացված լինեն (վկայականի բնօրինակում դաշտերի համարակալումը բացակայում է):

21. Վկայականի մեջ նշվում են՝

ա) 1-ին դաշտում՝ 4 տողով կատարված գրառումներ՝ հետեւյալ հաջորդականությամբ՝

1-ին տող՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ».

2-րդ տող՝ լիազորված մարմնի լրիվ անվանումը.

3-րդ տող՝ «ՎԿԱՅԱԿԱՆ».

4-րդ տող՝ «արտադրանքի պետական գրանցման մասին».

բ) 2-րդ դաշտում՝ Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը:

Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը նշվում է տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականը ձեւակերպելու դեպքում: Միասնական սանիտարական պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայական ձեւակերպելու դեպքում 2-րդ դաշտը չի լրացվում.

գ) 3-րդ դաշտում՝ վկայականի գրանցման համարը եւ դրա տրման ամսաթիվը:

Գրանցման համարը ձեւավորվում է հետեւյալ կարգով՝

XX.	XX.	XX.	XX.	XXX.	X.	XXXXXX.	XX.	XX,
1	2	3	4	5	6	7	8	9

որտեղ՝

1-ին դիրքը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան՝ անդամ պետության 2-նիշ տառային ծածկագիրն է.

2-րդ դիրք՝ անդամ պետության տարածաշրջանի 2-նիշ թվային ծածկագիրը (01-ից մինչեւ 99), որը ձեւավորվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

3-րդ դիրք՝ լիազորված մարմնի 2-նիշ թվային եւ (կամ) տառային ծածկագիրը, որը ձեւավորվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան (ռուսերեն այբուբենի «AA»-ից մինչեւ «ЯЯ» տառերի, 01-ից մինչեւ 99 թվերի, թվերի եւ տառերի համակցությունների օգտագործմամբ)։

4-րդ դիրք՝ լիազորված մարմնում աշխատատեղի 2-նիշ թվային ծածկագիրը (ծածկագիրը սահմանվում է լիազորված մարմնի կողմից)։

5-րդ դիրք՝ արտադրանքի 3-նիշ թվային ծածկագիրը։

001՝ օձանելիքակոսմետիկական արտադրանք։

002՝ ախտահանիչ, միջատասպան եւ կրծողասպան միջոցներ (կենցաղում, բուժական-պրոֆիլակտիկ հիմնարկություններում եւ այլ օբյեկտներում կիրառելու նպատակով (բացի անասնաբուժության մեջ կիրառվողներից))։

003՝ սննդում օգտագործվող կենսաբանորեն ակտիվ հավելումներ։

004՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերք։

005՝ մանկական սննդի համար նախատեսված սննդամթերք, այդ թվում՝ մանկական սննդի համար նախատեսված խմելու ջուր։

006՝ հանքային խմելու ջուր բնական՝ բուժիչ-սեղանի, բուժիչ, շշալցված խմելու ջուր։

007՝ մարզիկների, հղի կանանց ու կերակրող մայրերի սննդի համար նախատեսված սննդամթերք։

008՝ պոտենցիալ վտանգավոր քիմիական ու կենսաբանական նյութեր եւ դրանց հիմքով պատրաստվող պատրաստուկներ, որոնք հնարավոր վտանգ են ներկայացնում մարդու համար (բացի դեղամիջոցներից), բնական կամ արհեստական ծագման անհատական նյութեր (միացությունները), որոնք, արտադրման, կիրառման, տրանսպորտային փոխադրման, վերամշակման, ինչպես նաեւ կենցաղային պայմաններում կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա։

009՝ սննդային հավելումներ.

010՝ տեխնոլոգիական օժանդակ միջոցներ սննդի արդյունաբերության համար.

011՝ գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված օրգանիզմների կիրառմամբ ստացված սննդամթերք.

012՝ անձնական հիգիենայի պարագաներ՝ երեխաների եւ մեծահասակների համար.

013՝ ջրապատրաստման նյութեր, սարքավորումներ, սարքեր եւ այլ տեխնիկական միջոցներ, որոնք նախատեսված են կենցաղային եւ խմելու կարիքների համար ջրամատակարարման համակարգերում օգտագործման համար.

014՝ բերանի խոռոչի հիգիենայի միջոցներ եւ արտադրատեսակներ.

015՝ կենցաղային քիմիայի ապրանքներ.

016՝ հագուստ.

017՝ տոնուսը բարձրացնող ըմպելիքներ.

018՝ ալկոհոլային արտադրանք՝ ներառյալ թույլ ալկոհոլային արտադրանքը եւ գարեջուրը.

019՝ սննդամթերքի հետ շփման համար նախատեսված արտադրատեսակներ (բացառությամբ սպասքի, ճաշի պարագաների, տեխնոլոգիական սարքավորումների, փաթեթվածքի (խցանափակման միջոցների)).

6-րդ դիրք՝

«R» լիտեր՝ տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում.

«E» լիտեր՝ Միասնական սանիտարական պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում.

7-րդ դիրք՝ ընթացիկ տարում ձեւակերպվող վկայականի 6-նիշ հերթական համարը (յուրաքանչյուր օրացուցային տարվա սկզբում սահմանվում է սկսած «000001» համարից).

8-րդ դիրք՝ ամսվա 2-նիշ թվային ծածկագիրը (ամսվա հերթական համարը՝ 01-ից մինչեւ 12-ը).

9-րդ դիրք՝ տարվա 2-նիշ թվային ծածկագիրը (տարվա վերջին երկու թվերը՝ 00-ից մինչեւ 99-ը):

Վկայականի տրման ամսաթիվը նշվում է բառաթվային եղանակով՝ օրը՝ արաբական երկու թվով (չակերտներում), ամիսը՝ արաբական երկու թվով (ամսվա հերթական համարը՝ 01-ից մինչեւ 12-ը), տարին՝ արաբական չորս թվով (թվականի կրճատ նշումով՝ «թ.»).

դ) 4-րդ դաշտում՝ տեղեկություններ արտադրանքի մասին՝ ներառյալ արտադրանքի անվանումը,

արտադրանքի անվանումը (առկայության դեպքում),

տվյալներ արտադրանքի մասին, որոնք ապահովում են դրա նույնականացումը (տիպ, մակնիշ, մոդել, արտիկոլ եւ այլն) (առկայության դեպքում),

կիրառման ոլորտը, թողարկման ձեւը, պահպանման պայմանները, կիրառման եղանակը,

այն փաստաթղթի (փաստաթղթերի) անվանումը եւ նշագիրը, որին համապատասխան արտադրվել է արտադրանքը:

Թույլատրվում է մեկ վկայականում միավորել միասնական տեխնիկական պահանջներին համապատասխան մեկ արտադրողի կողմից արտադրված՝ նույն

անվանմամբ այնպիսի արտադրանքի մի քանի անուն, որն ունի միեւնույն բաղադրամասային (բաղադրիչային) կազմություն, հիգիենիկ բնութագիր, կիրառման ոլորտ, սակայն ունի հիգիենիկ բնութագրերի արժեքները չփոփոխող տարբերություններ.

ե) 5-րդ դաշտում՝ արտադրողի լրիվ անվանումը, դրա գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն) եւ արտադրանքի արտադրման գործունեությունն իրականացնելու վայրի հասցեն (հասցեները) (եթե հասցեները տարբեր են)՝ իրավաբանական անձի եւ դրա՝ արտադրանքն արտադրող մասնաճյուղերի (արտադրությունների) համար, կամ ազգանունը, անունը եւ հայրանունը (առկայության դեպքում), բնակության վայրը եւ արտադրանքի արտադրման գործունեությունն իրականացնելու վայրի հասցեն (հասցեները) (եթե հասցեները տարբեր են)՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար.

զ) 6-րդ դաշտում՝ հայտատուի լրիվ անվանումը, նրա գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն) եւ գործունեության իրականացման վայրի հասցեն (հասցեները) (եթե հասցեները տարբեր են)՝ իրավաբանական անձի համար, կամ ազգանունը, անունը եւ հայրանունը (առկայության դեպքում), բնակության վայրը՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար, ինչպես նաեւ հայտատուի գրանցման կամ հաշվառման (անհատական, նույնականացման) համարը, որն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան տրվում է իրավաբանական անձի կամ որպես անհատ ձեռնարկատեր՝ ֆիզիկական անձի պետական գրանցման ժամանակ.

է) 7-րդ դաշտում՝ տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) անվանումը (տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում) կամ Միասնական սանիտարական պահանջների II գլխի բաժնի (ենթաբաժնի) անվանումը (կետի, ենթակետի եւ այլնի համարը) (Միասնական սանիտարական պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի

ծեակերպման դեպքում).

ը) 8-րդ դաշտում՝ տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին կամ Միասնական սանիտարական պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող փաստաթղթերի մասին տեղեկություններ (հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների արձանագրություններ՝ նշելով համարը եւ ամսաթիվը, փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) անվանումը, հավատարմագրման վկայագրի գրանցման համարը), ինչպես նաեւ հայտատուի կողմից որպես տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին կամ Միասնական սանիտարական պահանջներին արտադրանքի համապատասխանության ապացույց ներկայացված այլ փաստաթղթերի մասին տեղեկությունները.

թ) 9-րդ դաշտում՝ վկայականի գործողության դադարեցման ամսաթիվը (օրը՝ արաբական երկու թվանշաններով, ամիսը՝ արաբական երկու թվանշաններով, տարին՝ արաբական չորս թվանշաններով): Վկայականի գործողության անժամկետ լինելը սահմանելու դեպքում կատարվում է «սահմանափակված չէ» գրառումը.

(«թ» ենթակետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի հունիսի 18-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)

ժ) 10-րդ դաշտում՝ վկայականը տրամադրած լիազորված մարմնի ղեկավարի (լիազորված անձի) պաշտոնը, ստորագրությունը, ազգանունը, անունը եւ հայրանունը (առկայության դեպքում) (դնելով կնիքը): Չի թույլատրվում ստորագրության փոխարեն ֆաքսիմիլեի օգտագործումը.

(«ժ» ենթակետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի հունիսի 18-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)

ժա) 11-րդ դաշտում՝ վկայականի ձեւաթղթի տպագրական համարը, որը դրվում է դրա պատրաստման ժամանակ (չի պահանջվում այն դեպքում, երբ վկայականը ձեւակերպվում է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով):

(«ժա» կետն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի հունիսի 18-ի թիվ 102 որոշմամբ)

22. Վկայականի 4-րդ, 5-րդ եւ 8-րդ դաշտերում նշվող տեղեկատվության զգալի ծավալի դեպքում այդպիսի տեղեկատվությունը ներկայացվում է վկայականի հավելվածում՝ սույն կանոնների 2-րդ կետում նշված միասնական ձեւին համապատասխան:

Տվյալ դեպքում վկայականի համապատասխան դաշտերում բերվում է վկայականի հավելվածի հղումը՝ նշելով հավելվածում թերթերի քանակը:

Հավելվածը վկայականի անքակտելի մասն է: Վկայականի հավելվածի ձեւաթուղթը խիստ հաշվետվության փաստաթուղթ է, ունի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2017 թվականի հունիսի 30-ի թիվ 80 որոշման 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ պաշտպանության աստիճաններ:

Հավելվածի յուրաքանչյուր թերթ համարակալվում է եւ դրա վրա զետեղվում են վկայականի գրանցման համարը, վկայականը տրամադրած լիազորված մարմնի ղեկավարի (լիազորված անձի) պաշտոնը, ստորագրությունը, ազգանունը, անունը եւ հայրանունը (առկայության դեպքում), այդ լիազորված մարմնի կնիքը:

23. Վկայականի (դրա հավելվածի) մեջ սույն կանոններով չնախատեսված տվյալների ներառում, ինչպես նաեւ բառերի կրճատում եւ տեքստի ուղղում չեն թույլատրվում:

24. Տրամադրված վկայականների պատճենները պատրաստվում են հայտատուի կողմից A4 ֆորմատի (210 x 297 մմ) սպիտակ գույնի թղթի թերթերի վրա, վավերացվում են նրա ստորագրությամբ եւ կնիքով (առկայության դեպքում):

Տրամադրված վկայականների պատճենների՝ իրավաբանական անձ հանդիսացող հայտատուի կողմից պատրաստման դեպքում, դրանք կարող են վավերացվել հայտատուի ղեկավարի կամ լիազորված անձի կնիքով (առկայության դեպքում) եւ ստորագրությամբ (նշելով լիազորող փաստաթղթի անվանումը եւ վավերապայմանները):

25. Միասնական սանիտարական պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում վկայականի (դրա հավելվածի) փոխարինումն առանց լրացուցիչ կամ կրկնակի հետազոտություններ (փորձարկումներ) եւ չափումներ անցկացնելու թույլատրվում է հետեւյալ դեպքերում՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի հունիսի 18-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)

ա) վկայականում (դրա հավելվածում) սխալների (վրիպակների) հայտնաբերում.

բ) հայտատուի կազմակերպարավական ձեւի, գտնվելու վայրի (իրավաբանական անձի հասցեի) փոփոխություն.

գ) արտադրողի կազմակերպարավական ձեւի, գտնվելու վայրի (իրավաբանական անձի հասցեի) փոփոխություն.

դ) արտադրանքի նկատմամբ պահանջներ սահմանող՝ նորմատիվ իրավական ակտի ընդունում՝ պայմանով, որ նման ակտի ընդունումը չի հանգեցնում հիգիենիկ անվտանգության ցուցանիշներում, արտադրանքի բաղադրությունում, դրա կիրառման ոլորտում փոփոխությունների կատարմանը:

25.1 Տեխնիկական կանոնակարգի (կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող վկայականի ձեւակերպման դեպքում առանց լրացուցիչ կամ կրկնակի հետազոտություններ (փորձարկումներ) եւ չափումներ անցկացնելու վկայականի (դրա հավելվածի)

փոխարինումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2018 թվականի ապրիլի 18-ի թիվ 44 որոշմամբ հաստատված՝ համապատասխանության գնահատման տիպային սխեմաների 166-րդ կետին համապատասխան.

(25.1 կետն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի հունիսի 18-ի թիվ 102 որոշմամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ